

պիսկոպոսը, տեղեկութիւն առնելով Էմինի ձեռնարկներու մասին, անոր կը զրկէ պատգամաւորներ եւ 600 ոսկի դրամ, ու կը թելադրէ, որ ամէն կերպ աշխատի համոզել վրաց Հէրակլ թագաւորը Տաճկաստանի վրայ քալելու: Յովնան եպիսկոպոսը իր նամակի (գրութեամբ 1763 թուին) մէջ կ'աւելցնէ. —

«Թուրքերը այն չեն, ինչ որ էին հարիւր տարի առաջ. կռուի մէջ անոնք ամբողջովին տեղի պիտի տան, եւ որովհետեւ անոնց քաղաքները ամրացած չեն, անոնց զբաւումը շատ դիւրին պիտի ըլլայ... Իբրեւ կռուող մարդ, դուք պիտի ունենաք 40,000 հոգի, որ պիտի միանան ձեզ 6 օրուան ընթացքին: Ասորինքն ու եղիտի քիւրդերը պատրաստ են միանալու մեզի»... (The Life and Adventures of Joseph Emin's, էջ 235, London*), Բ. տըպագրութիւն):

Այս 40,000 զինուած մարդու առաջարկը, որ կուգայ Յովնան եպիսկոպոսի կողմէ անշուշտ չափազանցուած է: Ապստամբելու ցանկութիւն ունեցողներու թիւը այսքան խոշոր ներկայացուած է, որպէսզի Վրաստանի իշխանը համաձայնի շարժուիլ Թուրքիոյ դէմ, վըստա՛ ըլլալով որ Տաճկահայաստանի խոշոր ուժերը ոտքի պիտի կանգնին: Բայց այդ ներկայացուած ուժի կէսը հրապարակ հանելու հաւանականութիւնը կար, մանաւանդ եթէ ընդունինք, որ այդ դարուն ժողովրդի եւ պետութեան գործածած զէնքերը նոյնն էին եւ շատ նախնական ու մատչելի ժողովրդին:

Այդ ուժերու մասին Յովսէփ Էմին աւելի մանրամասնութիւն մը կուտայ, որ չահեկան է: Հէրակլը իշխանը համոզելու համար, Յովսէփ Էմին Յովնան եպիսկոպոսի նամակին մէկ մասը կը կարդայ անոր. —

«... 4000 հայեր Բայազիտ կը միանան ձեզ. այն տեղէն կ'անցնինք 3 օրէն էրզրում եւ անոր կից տեղեր՝ Բասէն, Սասուն, Բիթլիզ. այդ տեղեր դուք պիտի ունենաք 12,000 ոտաւորներ առաջ քան թուրքերը կրնան իրենց ու—

ժերը շարժել: Մշոյ հայերէն 10,000 ձիաւորներ պիտի միանան ձեզ. ընդամէնը 40,000 մարդ»... (Նոյն, էջ 228):

Յովսէփ Էմին այս հատուածը կարդալով՝ կը թելադրէ Վրաստանի իշխանին առնել վըրաստանէն միայն 6000 ձիաւորներ եւ 10,000 ոտաւորներ եւ ուղղուիլ դէպի քրդական Բայազիտ: Հետաքրքիր է, որ Յովսէփ Էմին Ալաշկերտի կեդրոն եղող Բայազիտը կ'անուանէ քրդաց երկիր: Ըստ երեւոյթին, 18-րդ դարուն քրդական աւատապետը Բայազիտի մէջ այնքան զօրացած էր, որ այդ դաւաճող քրդական կը նկատուէր:

Հոս, փակագծի մէջ ըսեմ, որ Տաւրոսէն հիւսիս Տաճկահայաստանի դաւաճներուն մէջ քիւրդ իշխանապետներ կային, փոքրաթիւ աշիրէթներով (բացի Տէրսիմէն, որու մասին նախորդ էջերու մէջ խօսեցանք): Սակայն, 18-րդ դարու վերջին կէսերուն ու մանաւանդ 19-րդ դարու առաջին կէսին, հարաւի քիւրդերը հետզհետէ եկան եւ հոծ դանդաղներով տեղաւորուեցան հիւսիսի դաւաճներուն մէջ: Հիւսիսի հայկական դաւաճները բաժնուած էին չորս քրդական փաշայութեան կամ բէկութեան շրջանակներու. 1) Բայազիտի փաշայութիւնը (օրինակ՝ նշանաւոր Փայալի փաշան). 2) Ուղաթի (Տէրսիմ) բէկութիւնը. 3) Մշոյ դաշտի եւ Մօրդղանի Միրզաբէկի տունը, եւ 4) Վանի փաշայութիւնը (արեւելեան հարաւ ինկող քիւրդեր):

Հիմա քննենք Յովսէփ Էմինէն մեր մէջըներումները, որոնք թէեւ շատ հակիրճ են, սակայն, բաւական լոյս կը ափոեն հայերու եւ քրդերու ազատագրական շարժումներու փոխյարաբերութեանց վրայ: Ամենէն ուշագրաւը այն է, որ Յովնան եպիսկոպոսն է հրաւէր կարդացողը, որ արտաքին միջամտութիւն տեղի ունենայ, եւ խոստացողը ապստամբական շարժման մը, որուն պիտի մասնակցին մօտ 40,000 զինեալներ: Ս. Յովհաննու այս առաջնորդը, միեւնոյն ժամանակ Սասնոյ եպիսկոպոսն է, որովհետեւ Ս. Յովհաննու վանքը Սասուն կը նկատուէր մինչեւ մեր օրերը: Այդ պատճառով, թերեւս վանահայրը իր ուժը կ'առնէր կէս անկախ Սասունէն:

Երկրորդ ուշագրաւ պարագան այն է, որ

*) Յովսէփ Էմինի այս գիրքը հայերէնի թարգմանուած եւ տպուած է «Հայրենիք» օրաթերթի 1926-ի թիւերուն մէջ, իբրեւ թերթին: